Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2009 թ. դեկտեմբերի 7-ի N 1016 - Ն հրամանի

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 1105 «ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ՃՆՇՄԱՄԲ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԴԱՐԲԻՆ -ԴՐՈՇՄՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԳԼՈՒԽ 1

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 1105 «ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ՃՆՇՄԱՄԲ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԴԱՐԲԻՆ -ԴՐՈՇՄՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Արհեստավոր» որակավորման աստիճանի «Դարբին - դրոշմող» որակավորումը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի N 73-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 838-Ն որոշմամբ:
2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագրի յուրացումն իրականացվում է ուսուցման առկա և դրսեկության (էքստեռն) ձևերով:
3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագրի յուրացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի N 73-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 838-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.
   1) կրթության առկա ձևով՝
      ա. միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով ՝ 1 տարի
      բ. հիմնական ընդհանուր կրթության հիմքով առանց միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստանալու՝ 1 տարի,
      գ. հիմնական ընդհանուր կրթության հիմքով՝ ավագ դպրոցի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում՝ 3 տարի

2) դրսեկության (էքստեռնատ) ձևով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:

4. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով և հիմնական ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 1368 ժամ է, առավելագույն ծավալը՝ 2322 ժամ: Հիմնական կրթական ծրագիրը հիմնական ընդհանուր կրթության հիմքով՝ ավագ դպրոցի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 104 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.
ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 1105 «ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ՃՆՇՄԱՄԲ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԴԱՐԲԻՆ -ԴՐՈՇՄՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԱՎԱՐՏԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորմամբ մասնագետը կարող է իրականացնել հետևյալ գբաղմունքները.

1) սև և գունավոր մետաղներից, ինչպես նաև տարբեր նյութերից պատրաստել մեքենամասեր, իրեր, շինածոներ և տարբեր առարկաներ,

2) կատարել նման իրերի և առարկաների նորոգում,

3) պատրաստել և վերանորոգել կենցաղային տարբեր տեսակի շինածոներ, իրեր, առարկաներ:

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորմամբ շրջանավարտը իր մասնագիտական գործունեության ընթացքում պետք է իրականացնի հետևյալ պարտականությունները.

1) աշխատանքին համապատասխան նախապատրաստել նյութերը և սարքավորումները,

2) ընտրել պատրաստվող իրի, շինածոյի նյութը, ըստ պահանջվող մակնիշի և չափերի,

3) ստանալ նախապատրաստվածք՝ սառը և տաք դրոշմման, կտրման, արտահատման, կռածգման, արտածգման եղանակներով,

4) համապատասխան ջերմաստիճանային միջավայր ընտրելով կատարել շինածոյի ընթացիկ մշակում՝ ըստ էսքիզի, ձևափոխությունների, կտրման, հոդակապային միացությունների, գամման և այլ եղանակներով,

5) կատարել շինածոյի վերջնական մշակում, ապահովելով տեխնիկական ճշգրիտ չափերը, ճիշտ ձևավորումը, գեղարվեստական տեսքը, որակական հատկանիշները,

6) հանձնել կատարած աշխատանքը և խորհրդատվություն տրամադրել օգտագործողներին:

ԳԼՈՒԽ 3.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 1105 «ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ՃՆՇՄԱՄԲ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԴԱՐԲԻՆ -ԴՐՈՇՄՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

7. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) ժամանակակից անհատի և քաղաքացու ձևավորման պահանջներին համապատասխան ազգային և համամարդկային մշակույթի ու պատմության վերաբերյալ գիտելիքների յուրացում, դրանք մասնագիտական գործունեության ընթացքում կիրառելու հմտությունների ձևավորում,

2) մասնագիտական ոլորտի ընդհանուր գիտելիքների յուրացում, որոնք բավարար հիմք են հանդիսանում մասնագիտական խնդիրների հետ կապված հանձնարարությունները կատարելու համար,

3) մասնագիտական տեսական ու գործնական գիտելիքները կիրառելով արդյունավետ օգտագործել համապատասխան գործիքներ, սարքավորումներ,հարմարանքներ,

4) մասնագիտական գործառնությունները համապատասխան նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,

5) մասնագիտական տերմինաբանության ճիշտ ընկալում և կիրառում,

6) մասնագիտական գործունեության ժամանակ համապատասխան գործողությունների սոցիալական հետևանքները հաշվի առնելու հմտություն,

7) մասնագիտական ինքնազարգացման և կատարելագործման նպատակով իրեն անհրաժեշտ տեղեկությունները մասնագիտական աղբյուրներից ձեռք բերելու հմտությունների ձևավորում,

8) աշխատանքային խնդիրների լուծման ժամանակ պատասխանատվություն ստանձնելու, լուծումները հիմնավորված իրականացնելու կարևորությունը պատկերացնելու, նման աշխատանքի պատրաստ լինելու մակարդակ,

9) ինչպես ընդհանուր, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում աշխատելու համար հմտությունների ձևավորում:

ԳԼՈՒԽ 4.

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 1105 «ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ՃՆՇՄԱՄԲ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԴԱՐԲԻՆ -ԴՐՈՇՄՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

8. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում պետք է ապահովի՝

1) իմանալ ՀՀ Սահմանադրության, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող, իր բնագավառի օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,

2) տիրապետել հայոց լեզվին ,

3) հաղորդակցվել մեկ օտար լեզվով,

4) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,

5) ծանոթանալ ազգային և համաշխարհային պատմությանն ու մշակույթին,

6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին:

9. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է ապահովի՝

1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին,

2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:

10. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի առանցքային հմտություններին տիրապետում՝ ըստ աղյուսակ 1-ում բերված մոդուլների:

11. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական

ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերում՝ ըստ աղյուսակ 2-ում բերված մոդուլների:

ԳԼՈՒԽ 5.
ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) 1105 «ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ՃՆՇՄԱՄԲ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԴԱՐԲԻՆ -ԴՐՈՇՄՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

12. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) Հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ:

3) Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն:

4) Հատուկ մասնագիտական դասընթացները պարապող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

5) Ուումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա համապատասխան մասնագիտական կրթություն և մասնագիտական աշխատանքի փորձ:

6) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

13. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության, պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների լրիվ ցանկին: Այդ առարկաների, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային աշխատանքների) պետք է առկա լինեն համապատասխան դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ (գործնական պարապմունքների, ինքնուրույն արտալսարանային աշխատանքների կազմակերպման համար), գործնական խաղերի սցենարներ (դերային խաղեր), թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ (ուսումնադիտողական, լսատեսողական նյութեր դասավանդվող բոլոր առարկաների և բոլոր տեսակի պարապմունքների վերաբերյալ՝ ուսանողների և դասախոսների համար), ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

14. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. դրոշմման տեխնոլոգիայի և նյութագիտության,
բ. կոմպոզիցիայի և տեխնիկական գծագրության,
գ. դարբնոցային աշխատանքների,
դ. անհատական համակարգիչների,
ե. հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների,
զ. օտար լեզվի,
է. աշխատանքի անվտանգության,
ը. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների:

2) Ուսումնական արհեստանոցներ

ա. ընդհանուր դրոշմման,
բ. դարբնոցային իրերի պատրաստման:

3) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,
բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

15. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանցանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

2) Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պարապմունքները:

3) Ուսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնական տարում մինչև 100 ժամ:

4) Ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով:

5) Ուսանողների համար սահմանվում են արձակուրդներ տարեկան առնվազն երկու անգամ՝ 8-11 շաբաթ ընդհանուր տևողությամբ, այդ թվում 2 շաբաթից ոչ պակաս ձմռան ժամանակահատվածում: Արձակուրդների կոնկրետ տևողությունները և ժամկետները սահմանում է ուսումնական հաստատությունը:

6) Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ՝ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները որոշում է կազմակերպությունը՝ ուսանողների ընտրությամբ:

16. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագրի ուսուցումը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և(կամ) առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաները:

2) Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները:

3) Պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով:

4) Պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները:

5) Պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները:

6) Ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնա-արտադրական արհեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում :

7) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

17. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում:

2) Միջանկյալ ատեստավորում անց է կացվում ուսումնական կիսամյակի ընթացքում և վերջում:

3) Ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին:

4) Ուսանողների միջանկյալ ատեստավորման տեսակը և անցկացման ձևը ընտրում է ուսումնական հաստատությունը:

5) Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորում երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից պետական քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) պետական քննության կամ ավարտական /դիպլոմային/ աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով: Ամփոփիչ ատեստավորման ձևը ընտրում է ուսումնական հաստատությունը:

6) Ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշչով 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման արհեստավորի պատրաստվածության նկատմամբ սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

ԳԼՈՒԽ 6.
ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 1105 «ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ՃՆՇՄԱՄԲ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԴԱՐԲԻՆ -ԴՐՈՇՄՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

18. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու նպատակով սահմանվում է օրինակելի ուսումնական պլան՝ համաձայն աղյուսակ 3-ի:

19. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը՝

1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,

2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,

3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում՝ չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,

4) առարկայի և (կամ) մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկու-թյունները,

7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

Աղյուսակ 1

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՀՂՀ-3-09-001
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Սահմանել ուսումնառության անձնական նպատակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները, բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:
Ուսումնառության արդյունք 2	Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին
Կատարման չափանիշներ	ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք, բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ, գ. տեղեկատվության առանձնացում /խմբավորումը կատարում է նպատակային, դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:
Ուսումնառության արդյունք 3	Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, (պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը), բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները, գ. ցուցաբերում է համոզելու կարողություն, դ.կատարում է ճիշտ ամփոփում /եզրափակում:
Ուսումնառության արդյունք 4	Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները, բ.ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները. գ.մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:
Ուսումնառության արդյունք 5	Կատարել փաստաթղթավորում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության, բ.ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը, գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱԱՕ – 3-09-001
Մոդուլի նպատակը	Սովորողի մոտ ձևավորել կազմակերպություններում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման

	կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը. բ. Ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը. գ. Ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը. դ. Ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները: ե. Ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը. զ. Ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները. բ. Ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը. գ. Ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները. դ. Ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները. բ. Ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները. գ. Ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները. դ. Ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը. բ. Ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը. գ. Ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ. դ. Ճիշտ է վիրակապում կոտրվածքները. ե. Ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը. զ. Ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	**« ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»**
Մոդուլի դասիչը	ԸԱՀ 3 -09-001
Մոդուլի նպատակը	Սովորողին գիտելիքեր տալ աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու,

	առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները. բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները. գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV). դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:
Ուսումնառության արդյունք 2	Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները. բ. ճիշտ է ներկայացնում գործերընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ. գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ. դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները. բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները. գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները, դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարողություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին: ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ. զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվել ղեկավարի հետ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը. բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները. գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:
Ուսումնառության արդյունք 5	Դրսևորել քննադատական մտածողություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը. բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ. գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:
Ուսումնառության արդյունք 6	Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ»
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.

	բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան). գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները: դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում, ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը. զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները. է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՃԳՉ 3- 09 - 001
Մոդուլի նպատակը	«Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտությամբ սովորող ուսանողն ավարտելով այս մոդուլը ձեռք կբերի մասնագիտական աշխատանքային գծագրեր կարդալու, հասկանալու, պարզագույն գծագրեր կատարելու համար կիրառական գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ: Սովորող ուսանողը ձեռք կբերի նաև մեքենամասերի մակերևույթների մաքրության ու որակի, ճշտության դասերի թույլտվածքի ու նստեցվածքի և չափագիտության հասկացողությունների վերաբերյալ գիտելիքներ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարդալ աշխատանքային գծագերը և կատարել էսքիզներ:
Կատարման չափանիշներ	ա. ճանաչում է տարբեր առարկաների, իրերի և սարքերի գծագրական նշանները, բ. էսքիզների և սարքերի պայմանական նշանները ճիշտ է կարդում, գ. էսքիզների և սարքերի պայմանական նշանները ճիշտ է պատկերում, դ. ճիշտ է կարդում մեքենամասերի գծագրերը, ե. ճիշտ է կարդում և պատկերացնում տարբեր հանգույցների էսքիզների հավաքման և ձևավորման աշխատանքները, զ. ճիշտ է կատարում իրերի, առարկաների և շինածոների հանգույցների էսքիզները:
Ուսումնառության արդյունք 2	Տարբերակել մեքենամասերի չափերի թույլտվածքների և նստեցվածքների համակարգը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում մեքենամասերի մշակման ճշտությունը կանխորոշող պայմանները, բ. ճիշտ է բացատրում մշակվող մեքենամասերի մաքրությանը և որակին ներկայացվող հիմնական պահանջները, գ. ճիշտ է պարզաբանում մեքենամասերի համափոխարինելիության սկզբունքը, դ. ճիշտ է մեկնաբանում մեքենամասի անվանական, սահմանային և իրական չափերը
Ուսումնառության արդյունք 3	Օգտվել թույլտվածքների աղյուսակներից:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում թույլտվածք և նստեցվածք հասկացությունները, չափերի շեղումները (վերին, ներքին և իրական) և բացատրում ի՞նչ են բացակն ու ձգվածքը, բ. ճիշտ է մեկնաբանում թույլտվածքների համակարգը և սահմանում վերջինս լիսեռի ու անցքի համակարգերի բաժանման հատկանիշները, գ. ճիշտ է թվարկում թույլտվածքների համակարգի ճշտության աստիճանները (կվալիտետները), դ. ճիշտ է օգտվում թույլտվածքների աղյուսակներից, ե. ըստ տրված գծագրի կամ խնդրի պայմանի ճիշտ է հաշվարկում լիսեռի թույլտվածքը, անցքի թույտվածքը և հնարավոր նվազագույն բացակը կամ ձգվածքը:

Ուսումնառության արդյունք 4	Տիրապետել չափումների տեխնիկային՝ արդյունավետ աշխատելով հիմնական չափիչ գործիքներով:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է բացատրում, օգտագործվող ժամանակակից չափման միավորները և դրանց սահմանումները, բ. Ճիշտ է մեկնաբանում գոյություն ունեցող չափման մեթոդները և դրանց իրականացման եղանակները, գ. Ճիշտ է բացատրում չափող գործիքների կառուցվածքն ու աշխատանքը և դրանցով իրականացնում է հանձնարարված չափումները ու մեկնաբանում վերջիններիս չափելու ճշտությունը, դ. Ճիշտ է օգտվում միկրոմետրից և չափաձողից ունիվերսալ անկյունաչափից, կալիբրներից, բացակաչափից, շաբլոններից և պարուրակաչափերից:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՑՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՕՀ 3 - 09 - 001
Մոդուլի նպատակը	Տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում
Մոդուլի գնահատման կարգը	մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	WORD ծրագիր (հիմնական տեղեկություններ
Կատարման չափանիշներ	ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը բ. բացել նոր փաստաթուղթ գ. ստեղնաշարի օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում զ. փակել փաստաթուղթը է. բացել առկա փաստաթուղթը ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի տարրական ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար բ. նշել բառերը և տեքստային հատվածները գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ դ. կատարել տողերի հավասարեցում ե. փոխել միջտողային տարածությունները զ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները ժա.կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը ժբ.մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ, ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ ժգ. պատճենել տեքստը ժդ. տեղափոխել տեքստը ժե. տողադարձել տեքստը ժզ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով
Ուսումնառության	Փաստաթղթի պահպանում

արդյունք 3	
Կատարման չափանիշներ	ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը, բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը, գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:
Ուսումնառության արդյունք 4	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
Կատարման չափանիշներ	ա. պատրաստել աղյուսակ, բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ, գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ, դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ, ե. ջնջել աղյուսակի տողերը և սյուները, զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ, է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ, ը. փոխել աղյուսակի գծերի գույնը, թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:
Ուսումնառության արդյունք 5	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
Կատարման չափանիշներ	ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ, բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, գ. գծագրել կանոնավոր պատկերներ, դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով, ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները, զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ, է. գծագրել տեքստային բլոկներ, ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները, թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները, ժ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:
Ուսումնառության արդյունք 6	Փաստաթղթի տպագրում
Կատարման չափանիշներ	ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը, բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները, գ. տպագրել փաստաթուղթը:
Ուսումնառության արդյունք 7	Ինտերնետում աշխատելու իմացություն
Կատարման չափանիշներ	ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը, բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը, գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը, դ. իմանալ History հրամանի նշանակությունը, ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը, զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը, է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը, ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը, թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից, ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից, ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները, ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա, ժգ. ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից, ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն, ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:

Աղյուսակ 2

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՄՄՏճ 3-09-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է մետաղների ճնշմամբ մշակման մասնագիտության վերաբերյալ սովորողին տալ գիտելիքներ ճնշմամբ մշակման, դրա դերի ու նշանակության, զարգացման պատմության, դարբնոցա-դրոշմիչային արհեստանոցում օգտագործվող հիմնական գործիքների, հարմարանքների ու սարքավորումների, դրանց դերի և նշանակության մասին:
Մոդուլի տևողությունը	18 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանա մետաղների ճնշմամբ մշակման առաջավոր տեխնոլոգիաները և զարգացման ուղիները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ճնշմամբ մշակման տեխնոլոգիաները և դրանց զարգացման նորագույն ուղիները, բ. ճիշտ է ներկայացնում ճնշմամբ մշակման գործընթացի նորագույն ձևերը և եղանակները:
Ուսումնառության արդյունք 2	Ճանաչել մետաղների ճնշմամբ մշակման արհեստանոցում օգտագործվող հիմնական մետաղական և ոչ մետաղական նյութերը, գործիքները, դարբնոցա-դրոշմիչային հարմարանքները, տաքացման ու դրոշման սարքավորումները և իմանա դրանց նշանակությունը:
Կատարման չափանիշներ	ա. ճանաչում և անվանում է ճնշմամբ մշակման արհեստանոցում օգտագործվող հիմնական մետաղական նյութերը, գործիքները, դրոշման և դարբնոցային բազմաբնույթ սարքավորումներն ու հարմարանքները, բ. ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր մակնիշի մետաղի, գործիքի, սարքավորման ու հարմարանքի նշանակությունը, կիրառնամ ոլորտը, գ. ցույց է տալիս համապատասխան գործիքների ու սարքավորումների օգտագործման ձևը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՄՄՏճ 3-09-002
Մոդուլի նպատակը	Նպաստել, որպեսզի սովորողը ձեռք բերի գիտելիքներ սև և գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների տեսակների, հատկությունների, մակնիշավորման սկզբունքների և կիռառության բնագավառների վերաբերյալ, ինչպես նաև ձեռք բերի մետաղները, համաձուլվածքները, նախապատրաստվածքների պրոֆիլները ճանաչելու մակնիշավորման սկզբունքները գործնականում օգտագործելու կարողություն: Սովորողի մոտ ձևավորել մետաղական նյութ ընտրելու, լեգիրման, ջերմային և ջերմաքիմիական մշակման, պլաստիկ դեֆորմացիայի, վերաբյուրեղացման, ջերմամեխանիկական մշակման գործընթացների վերաբերյալ գիտելիքներ, հասկացողություններ և կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՄՏճ 3-09-001 մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ պողպատների և գունավոր մետաղների դասակարգումը, նրանց կիրառման բնագավառը և հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում պողպատների, որպես երկաթածխածնային միացության, կառուցվածքային էությունը և բացատրում դրանց դասակարգումը, բ. ճիշտ է մեկնաբանում պողպատների և գունավոր մետաղների հիմնական

	ֆիզիկամեխանիկական հատկությունները՝ ամրություն, կարծրություն, կռելիություն, պլաստիկություն, գ. ճիշտ է մեկնաբանում պողպատների և գունավոր մետաղների կիրառման բնագավառը ելնելով նրանց հիմնական ֆիզիկամեխանիկական հատկություններից, դ. կարողանում է մետաղների նմուշների կոտրվածքներով ճանաչել և տարբերել և գունավոր մետաղները և պողպատները, ե. կարողանում է ձեռքի փականագործական գործիքներով՝ խարտոց, սրոցաքար, հղկաքար գնահատել պողպատի բացարձակ և համեմատական ամրությունները և կարծրությունները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ պողպատների և գունավոր մետաղների մակնիշավորումը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում պողպատների մակնիշավորումը, բ. ճիշտ է ներկայացնում և գունավոր մետաղների մակնիշավորումը, գ. կարողանում է վերծանել պողպատների և և գունավոր մետաղների մակնիշները:
Ուսումնառության արդյունք 3	Հիմնավորել նյութը: Աշխատանքային տեղը նախապատրաստել շինածո պատրաստելու գործողությանը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ընտրում նախապատրաստվածքի նյութի ընտրությունը, բ. ճիշտ է ընտրում նախապատրաստվածքի նյութի չափերը, հիմնավորում լեգիրող էլեմենտների առկայությունը, և որոշում չափաքանակները, գ. ճիշտ է որոշում նախապատրաստվածքի նյութի տաքացման, սառեցման ջերմաստիճանները տաքացման ձևը, մշակման ջերմաստիճանային տիրույթը, դ. ճիշտ է ընտրում նախապատրաստվածքի մշակման համար անհրաժեշտ գործիքները, օժանդակ նյութերն ու սարքավորումները, ե. ճիշտ է ընտրում չափող և ստուգող սարքավորումները:
Ուսումնառության արդյունք 4	Ստանալ պահանջվող շինածոն, պահպանելով նախատեսված չափերն ու որակը:
Կատարման չափանիշներ	ա. չափագրումը կատարում է ճշգրիտ, բ. ջերմային մշակման ռեժիմները լրիվ համապատասխանում են ընտրված նյութի մակնիշին, գ. մշակված շինածոն իր չափերով և որակով համապատասխանում է առաջադրված պահանջարկին, դ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները
Ուսումնառության արդյունք 5	Կատարել ջերմային մշակման օպերացիաներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կատարում նախապատրաստվածքի նախնական ջերմային մշակումը՝ թրծումը, բ. ճշգրիտ ռեժիմներով է կատարում պատրաստվող շինածոի մխումը և արձակումը, գ. ապահովում է բավարար կարծրություն, ամրություն և ֆիզիկամեխանիկական անհրաժեշտ հատկություններ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	**«ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ»**
Մոդուլի դասիչը	ՄՄՏճ 3-09-003
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային էսքիզից և տեխնիկական քարտից օգտվելու, գլոցման և լարածգման համար նախատեսված գործիքներն ու սարքերն օգտագործելու, գլոցման և լարածգման եղանակով տեխնիկական քարտում նշված չափերով և պրոֆիլներով նախապատրաստվածքներ պատրաստելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 Ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած ՄՄՏճ 3-09-002 մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Օգտվել աշխատանքային էսքիզից և կարդալ տեխնիկական քարտը

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքային էսքիզի վրա գլոցման և լարածգման եղանակով ստացված նախապատրաստվածքներից պատրաստվող իրերը, բ. ճիշտ է կարդում տեխնիկական քարտում նշված՝ նախապատրաստվածքների չափերը և պրոֆիլները:
Ուսումնառության արդյունք 2	Տարբերակել գլոցման և լարածգման գործիքները, սարքերը, օժանդակ նյութերն ու հարմարանքները, ընտրել դրանցից օգտվելու եղանակը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գլոցման և լարածգման սարքերը և նրանց օգտագործման ձևերը, բ. ճիշտ է ընտրում լարածգման համար նախատեսված օժանդակ նյութերը, գ. ճիշտ է ընտրում օժանդակ հարմարանքները և դրանցից օգտվելու եղանակը:
Ուսումնառության արդյունք 3	Կատարել գլոցում և լարածգում:
Կատարման չափանիշներ	ա. ըստ աշխատանքային քարտի՝ ճիշտ է ընտրում գլոցման և կորզանման սարքերի վրա գտնվող համապատասխան բանվորական տարրերը, բ. ճիշտ է կատարում գլոցման և կորզանման գործողությունները, գ. պահպանում է մետաղի ջերմային մշակման ռեժիմը, դ. ստացված նախապատրաստուքները համապատասխանում են աշխատանքային քարտում նշված չափերին, ե. նախապատրաստվածքների մեխանիկական հատկությունները պահպանված են, զ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՏԱՂԱԿԱՆ ՇԻՆԱԾՈՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ: ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԴՐՈՇՄՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ»	
Մոդուլի դասիչը	ՄՄՏՆ 3-09-004
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ նախապատրաստվածքներ պատրաստել դրոշմման եղանակով:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՄՏՆ 3-09-002 մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել չափանշման աշխատանքներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում չափանշում կատարելու համար նախատեսված գործիքները և նրանց օգտագործման ձևերը, բ. ըստ տեխնիկական էսքիզի՝ ճիշտ է կատարում չափանշման աշխատանքները, գ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:
Ուսումնառության արդյունք 2	Կատարել դրոշմման աշխատանքներ:
Կատարման չափանիշներ	ա. գիլյոտինային տարբեր մկրատներից, դրոշմող, կռող, ծնկավոր, շուռտվիկային, ժապավենային, ուղղման, խզման, լծակավոր, դրոշմահատ, ունիվերսալ և այլ տեսակի մամլիչներից ճիշտ է ընտրում շինածոի ստացման համար անհրաժեշտ սարքավորումը, բ. ճիշտ է ընտրում տվյալ աշխատանքի կատարմանը համապատասխանող մեխանիկական և հիդրավլիկական, սառը և տաք դրոշման, մեքենաները և մուրճերը, գ. ճիշտ է օգտվում դրոշման համար նախատեսված օժանդակ հարմարանքներից, դ. ճիշտ է ընտրում ածխածնային, կոնստրուկցիոն, լեգիրված և գործիքային պողպատներից և համաձուլվածքներից, ինչպես նաև ալյումինե, մանգանի, տիտանի և նիկելի հիմքով համաձուլվածքներից շինածոի համար նյութը, ե. արդյունքը համապատասխանում է աշխատանքային էսքիզին, զ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:
Ուսումնառության	Կատարել կտրման և հատման աշխատանքներ:

արդյունք 3	
Կատարման չափանիշներ	ա. տարբերակում է կտրման-հատման համար նախատեսված գործիքներն ու հարմարանքները, բ. ճիշտ է ընտրում դարբնոցային՝ հարվածային, սեղմող, ընդգրկող բռնող և այլ գործիքները և սարքերը, գ. ճիշտ է ընտրում մկրատների և հատիչների տեսակները՝ ըստ անհրաժեշտության, դ. ճիշտ է ընտրում հատման համար նախատեսված օժանդակ հարմարանքները, ե. ճիշտ է կատարում կտրման և հատման գործողությունը, զ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները
Ուսումնառության արդյունք 4	Կատարել պատրաստվող շինածոյի ստուգման աշխատանքներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ընտրում պատրաստվող շինածոի համար անհրաժեշտ չափման գործիքները և սարքերը, բ. ճիշտ է կատարում գծային չափման աշխատանքները, գ. կարծրաչափերի կիրառմամբ ճիշտ է որոշում շինածոի կարծրությունները, դ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՔՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂ: ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՄԱՔՐՈՒՄ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄ, ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՄՄՏԵ 3-09-005
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատատեղը էկոլոգիապես մաքուր պահելու, մաքրելու, և կատարված աշխատանքը հանձնելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՄՏԵ 3-09-003 մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Աշխատատեղի մաքրում, էկոլոգիական չափանիշների ապահովում, անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ընտրում արտահագուստը, ձեռքերը, գործիքները մաքրելու համար նախատեսված խոզանակները, բ. աշխատախսեղանը մաքուր է, աշխատանքային գործիքները դասավորված, գ. աշխատանքի ժամանակ պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները, դ. աշխատատեղը բավարարում է էկոլոգիական պահանջներին:
Ուսումնառության արդյունք 2	Մաքուր աշխատատեղի ապահովում:
Կատարման չափանիշներ	ա. աշխատատեղում պահպանում է մաքրություն, բ. աշխատատեղը մաքուր է, թափոնները հեռացված, գ.. աշխատատեղը մաքրված է չօգտագործվող նյութերից և իրերից, դ. աշխատատեղը բավարարում է էկոլոգիական պահանջներին
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԱՐԲՆՈՑԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՄՄՏԶ 3-09-006
Մոդուլի նպատակը	Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը ձեռք կբերի դարբնոցային արտադրության ասպարեզում օգտագործվող գործընթացների սկզբունքների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ և կիրառական հմտություններ
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Մուտքային պահանջները՝ սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՄՏԶ 3-09-002 ՄՄՏԶ 3-09-004 մոդուլները
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատատեղը էկոլոգիապես մաքուր պահելու, մաքրելու, և կատարված աշխատանքը հանձնելու կարողություններ:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել դարբնոցային արտադրության էությունը և հնարավորությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում դարբնոցային արտադրության լայն հնարավորությունները որպես մեքենամասերի պատրաստման

	բարձրարտադրողական և նյութի խնայողաբար օգտագործման առաջատար եղանակ, բ. ճիշտ է ներկայացնում արտադրվող կռվածքները որպես բարձր ամրություն և մաշակայունություն ունեցող արտադրանքներ, համեմատած ձուլման, մեխանիկական մշակման և այլ եղանակների հետ, գ. ճիշտ է ներկայացնում դարբնի մասնագիտությունը
Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել դարբնոցային արտադրության հիմնական գործընթացները և ստացվող արտադրանքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում դարբնոցային արտադրության տեխնոլոգիական հիմնական գործընթացները՝ մետաղի տաքացումը, նստեցման, կռածգման, կտրման, անցքահատման, բաշխման, եռակցման և մյուս գործընթացները, բ. ճիշտ է ներկայացնում կռման տեխնոլոգիական գործընթացներով ստացվող տիպային կռվածքների՝ օղակների, վռանների, լիսեռների, ձողաձև շինվածքների, ինչպես նաև կենցաղային և գեղարվեստական նշանակություն ունեցող իրերի նախապատրաստվածքների ընտրությունը և անցումների հաջորդականությունը, գ. ճիշտ է ներկայացնում ստացվող կռվածքների առանձնահատկությունները, պատկերում դրանց սխեմատիկորեն:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել դարբնի աշխատատեղի կազմակերպման և սպասարկման հարցերը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում դարբնի աշխատատեղը, կռման մուրճի, տաքացման վառարանի, օգտագործվող հիմնական և օժանդակ գործիքների հարմարավետ տեղաբաշխումը, բ. ճիշտ է ներկայացնում նախապատրաստվածքների, կռվածքների և մնացորդների հարմարավետ տեղաբաշխումը, գ. ճիշտ է ներկայացնում աշխատատեղը նախապատրաստվածքներով սպասարկման, արտադրանքի հանձնման, գործիքների սպասարկման, մուրճերի վրա դրանց ամրացման եղանակները, դ. ճիշտ է ներկայացնում գործիքները արտադրամասի համապատասխան պահեստներում պահպանելու, հաշվառելու, վերանորոգելու մեխանիզմները, ե. ճիշտ է ներկայացնում արտադրամասի պետի, հերթափոխի պետի, կարգաբերողի գործունեու թյունը աշխատատեղի սպասարկման ոլորտում, զ. ցուցաբերում է աշխատատեղի կազմակերպման և սպասարկման գործնական հմտություններ:
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել անհրաժեշտ հմտություններ դարբնոցային արտադրության տեխնոլոգիական գործընթացների իրականացման ասպարեզում:
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է մշակել տիպային կռվածքների՝ օղակների, վռանների, ատամնանիվների և լիսեռատիպ շինվածքների կռման տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունը անցումների չափերով, ընտրել նախապատրաստվածք և տաքացման ռեժիմ, բ. կարողանում է հիմնավորել ընտրված տեխնոլոգիական տարբերակը, հիմք ունենալով գործընթացի տնտեսական շահավետությունը, գ. կարողանում է գործնականորեն ցուցադրել կռման գործընթացներ իրականացնելու հմտություններ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴՐՈՇՄԻՉԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ»	
Մոդուլի դասիչը	ՄՄՏՃ 3-09-007
Մոդուլի նպատակը	Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը ձեռք կբերի դրոշմիչային արտադրության ասպարեզում օգտագործվող գործընթացների սկզբունքների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ և կիրառական հմտություններ
Մոդուլի տևողությունը	90 ժամ
Մուտքային պահանջները	Մուտքային պահանջները՝ սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՄՏՃ 3-09-002 ՄՄՏՃ 3-09-004 մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատատեղը էկոլոգիապես մաքուր պահելու, մաքրելու, և կատարված աշխատանքը հանձնելու կարողություններ:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել դրոշմիչային արտադրության էությունը և հնարավորությունները:
Կատարման	ա. ճիշտ է ներկայացնում դրոշմիչային արտադրության լայն

չափանիշներ	հնարավորությունները որպես կռվածքների և մեքենամասերի պատրաստման բարձրարտադրողական և նյութի խնայողաբար օգտագործման առաջատար եղանակ, բ. ճիշտ է ներկայացնում արտադրվող կռվածքները և դրոշմված մեքենամասերը որպես բարձր ամրություն և մաշակայունություն ունեցող արտադրանքներ, համեմատած ձուլման, մեխանիկական մշակման և այլ եղանակների հետ, գ. ճիշտ է ներկայացնում դրոշմողի մասնագիտությունը
Ուսումնառության արդյունք 2	Բնութագրել դրոշմիչային արտադրության հիմնական գործընթացները և ստացվող արտադրանքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տաք դրոշմիչային տեխնոլոգիական գործընթացներով ստացվող տիպային կռվածքների՝ օղակների, վռանների, լիսեռների, ձողաձև և այլ շինվածքների նախապատրաստվածքների ընտրությունը և անցումների հաջորդականությունը, բ. ճիշտ է ներկայացնում սառը դրոշմիչային արտադրության տեխնոլոգիական գործընթացները՝ կտրումը, արտահատումը, անցքահատումը, արտաձգումը, ծռումը, ձևավորումը և մամլումը, գ. ճիշտ է ներկայացնում դրոշմիչներով ստացվող կռվածքների և մեքենամասերի առանձնահատկությունները, պատկերում դրանք սխեմատիկորեն:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել սառը և տաք դրոշմման համար օգտագործվող մուրճերի և մամլիչների աշխատանքի էությունը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում դրոշմման շոգեօդային մուրճի աշխատանքի էությունը, բ. ճիշտ է ներկայացնում հասարակ գործողության շուռտվիկային մամլիչի աշխատանքի էությունը, գ. ճիշտ է ներկայացնում կրկնակի գործողության շուռտվիկային մամլիչի աշխատանքի էությունը, դ. ճիշտ է ներկայացնում տաք դրոշմման շուռտվիկային մամլիչի աշխատանքի էությունը, ե. ճիշտ է ներկայացնում հիդրավլիկական մամլիչի աշխատանքի էությունը:
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել անհրաժեշտ հմտություններ դրոշմիչային արտադրության տեխնոլոգիական գործընթացների իրականացման ասպարեզում:
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է մշակել մեքենամասերի արտահատման, անցքահատման, ծռման, արտաձգման, մամլման տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունը, ընտրելով համապատասխան նախապատրաստվածքներ, բ. կարողանում է մշակել տիպային կռվածքների՝ օղակների, ատամնանիվների նախապատրաստվածքների, լիսեռների տաք դրոշմման տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունը չափերով, ընտրելով սկզբնական նախապատրաստվածքներ և տաքացման ռեժիմ, գ. կարողանում է հիմնավորել ընտրված տեխնոլոգիական տարբերակը, հիմք ունենալով գործընթացի տնտեսական շահավետությունը, դ. կարողանում է գործնականորեն ցուցադրել սառը թերթային և տաք ծավալային դրոշմման գործընթացներ իրականացնելու հմտություններ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԱՐԲՆՈՑԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԵՐՁԱՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՄՄՏՃ 3-09-008
Մոդուլի նպատակը	Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը ձեռք կբերի անհրաժեշտ գիտելիքներ դարբնոցային արտադրության գործիքների և հանդերձանքների կառուցվածքների և դրանց գործարկելու հմտություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՄՏՃ 3-09-002, ՄՄՏՃ 3-09-006 մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատատեղը էկոլոգիապես մաքուր պահելու, մաքրելու, և կատարված աշխատանքը հանձնելու կարողություններ:
Ուսումնառության արդյունք 1	Տարբերի դարբնոցային արտադրության գործիքներն ու հանդերձանքներն ըստ նշանակության:

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում պնևմատիկական և շոգեօդային կռման մուրճերի զարկանների, սալերի, օղակների, կալակների, կտրող կացինների նշանակությունը, բ. ճիշտ է ներկայացնում պնևմատիկական և շոգեօդային կռման մուրճերի վրա օգտագործվող հանդերձանքների կառուցվածքը,
Ուսումնառության արդյունք 2	Կարողանա ներկայացնել գործիքների և հանդերձանքների այն թերությունները, որոնք արտադրանքի խոտան են առաջացնում
Կատարման չափանիշներ	ա. կարողանա ներկայացնել կռման գործիքների և հանդերձանքների այն թերությունները, որոնք խոտան են առաջացնում, բ. կարողանա ներկայացնել կռվածքների չափերի և մակերևույթի անճշտությունների առաջացման պատճառները և դրանց վերացման եղանակները:
Ուսումնառության արդյունք 3	Իմանա գործիքներն ու հանդերձանքները մուրճերի վրա ամրացման եղանակները և ունենա այն գործնականորեն օգտագործելու հմտություններ
Կատարման չափանիշներ	ա. իմանա կռման պնևմատիկական և շոգեօդային մուրճերին գործիքների և հանդերձանքների ամրացման եղանակները, բ. ունենա կռման պնևմատիկական և շոգեօդային մուրճերի վրա գործիքները և հանդերձանքներն ամրացնելու գործնական հմտություններ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴՐՈՇՄԻՉԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԵՐՁԱՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՄՄՏՃ 3-09-009
Մոդուլի նպատակը	Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը ձեռք կբերի անհրաժեշտ գիտելիքներ դարբնոցա - դրոշմիչային արտադրության գործիքների և հանդերձանքների կառուցվածքների և դրանց գործարկելու հմտություններ:
Մոդուլի տևողությունը	90 ժամ
Մուտքային պահանջները	սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՄՏՃ 3-09-002, ՄՄՏՃ 3-09-006 մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատատեղը էկոլոգիապես մաքուր պահելու, մաքրելու, և կատարված աշխատանքը հանձնելու կարողություններ:
Ուսումնառության արդյունք 1	Իմանա յուրաքանչյուր դրոշմիչային սարքավորման վրա տեղադրվող գործիքների և հանդերձանքների կառուցվածքային առանձնահատկությունները և գործողության սկզբունքները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում արտահատման կամ անցքահատման հասարակ գործողության թերթային դրոշմիչի կառուցվածքը և նրանով կատարվող գործողությունների հաջորդականությունը, բ. ճիշտ է ներկայացնում ծռման սովորական դրոշմիչի կառուցվածքը և նրանով կատարվող գործողությունների հաջորդականությունը, գ. ճիշտ է ներկայացնում արտաձգման սովորական դրոշմիչի կառուցվածքը և նրանով կատարվող գործողությունների հաջորդականությունը, դ. ճիշտ է ներկայացնում հաջորդական գործողության դրոշմիչի կառուցվածքը և նրանով կատարվող գործողությունների հաջորդականությունը, ե. ճիշտ է ներկայացնում համատեղ գործողության դրոշմիչի կառուցվածքը և նրանով կատարվող գործողությունների հաջորդականությունը զ. ճիշտ է ներկայացնում դրոշմման մուրճի և տաք դրոշմման շուռտվիկային մամլիչի վրա տեղակայվող դրոշմիչների կառուցվածքը և նրանց վրա կատարվող գործողությունների հաջորդականությունը
Ուսումնառության արդյունք 2	Իմանա գործիքների և հանդերձանքների բանվորական տարրերի չափերի հաշվարկի հիմունքները և ունենա այն իրականցնելու հմտություններ
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է հաշվել անցքահատման մամլամատի և մամլամայրի կատարողական չափերը, բ. կարողանում է հաշվել արտահատման մամլամատի և մամլամայրի բանվորական չափերը, գ. կարողանում է հաշվել ծռման մամլամատի և մամլամայրի կատարողական չափերը, դ. կարողանում է հաշվել արտաձգման մամլամատի և մամլամայրի կատարողական չափերը, ե. կարողանում է հաշվել ժապավենի կամ շերտի մատուցման քայլն

	ապահովվող տարրերի՝ հենարանի և քայլային դանակի չափերը և տեղակայել դրանք, զ. կարող է պատկերել թերթային դրոշմիչի կառուցվածքը սխեմատիկորեն, ընտրելով դրա մեքենամասերի հիմնական չափերը, է. կարողանում է հաշվել օղակաձև կռվածքի մուրճային դրոշմիչի դրոշմման առվակի չափերը և սխեմատիկորեն պատկերել դրոշմիչը, ը. կարողանում է հաշվել օղակաձև կռվածքի տաք դրոշմման մամլիչի դրոշմիչի առվակների չափերը և սխեմատիկորեն պատկերել դրոշմիչը,
Ուսումնառության արդյունք 3	Կարողանա որոշել գործիքների և հանդերձանքների բանվորական տարրերի մաշվածության աստիճանը և այն վերացնելու եղանակները
Կատարման չափանիշներ	ա. կարող է որոշել արտահատման և անցքահատման մամլամայրերի և մամլամատների մաշվածության աստիճանը և այն վերանորոգելու անհրաժեշտությունը դրոշմմված մեքենամասի չափերի և կտրված եզրերի որակի զննումով, բ. կարող է որոշել ծռման դրոշմիչի մամլամայրի և մամլամատի մաշվածության աստիճանը և այն վերանորոգելու անհրաժեշտությունը ծռված տեղամասի որակի զննումով, գ. կարող է որոշել արտաձգման մամլամայրի և մամլամատի մաշվածության աստիճանը և այն վերանորոգելու անհրաժեշտությունն արտաձգված մեքենամասի չափերի և արտաքին մակերևույթի զննումով, դ. կարող է որոշել դրոշմման մուրճի և տաք դրոշմման շուռտվիկային մամլիչի դրոշմիչների առվակների մաշվածության աստիճանը դրոշմմված կռվածքի չափերի ստուգումով և դրոշմիչի աշխատանքային տարրերի մակերևույթների արատների զննումով, ե. կարողանա ներկայացնել արտահատման և անցքահատման, ծռման և արտաձգման մամլամայրերի և մամլամատերի վերանորոգման գործընթացները հղկումով ու մեխանիկական մշակման այլ եղանակներով, զ.կարողանա ներկայացնել տաք ծավալային դրոշմման դրոշմիչների առվակների վերանորոգման եղանակները մեխանիկական մշակման և եռակցման միջոցով:
Ուսումնառության արդյունք 4	Իմանա գործիքներն ու հանդերձանքները մալիչների և մուրճերի վրա ամրացման եղանակները և ունենա այն գործնականորեն օգտագործելու հմտություններ:
Կատարման չափանիշներ	ա. իմանա տաք դրոշմման շոգեօդային մուրճերին և մամլիչներին գործիքների և հանդերձանքների ամրացման եղանակները, բ. իմանա դրոշմման մուրճերի և դրոշմման շուռտվիկային մամլիչների վրա սեպային և պտուտակային ամրացման էլեմենտներով դրոշմիչների ամրացման եղանակները, գ. իմանա հասարակ գործողության թերթային դրոշմման մամլիչների վրա վերևի սալը սողնակին և ներքևի սալը մամլիչի սեղանին ամրացնելու եղանակները, դ. իմանա կրկնակի գործողության թերթային դրոշմման մամլիչների վրա դրոշմի շարժական տարրերն արտաքին և ներքին սողնակներին և դրոշմիչի անշարժ մասը մամլիչի սեղանին ամրացնելու եղանակները, ե. ունենա մուրճերի և մամլիչների վրա գործիքները և հանդերձանքներն ամրացնելու գործնական հմտություններ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԱՐԲՆՈՑԱ-ԴՐՈՇՄԻՉԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՄՄՏՃ 3-09-010
Մոդուլի նպատակը	Ավարտելով այս մոդուլը սովորողը ձեռք կբերի գիտելիքներ դարբնոցա - դրոշմիչային արտադրության սարքավորումների կառուցվածքի, տեխնիկական բնութագրերի վերաբերյալ և սարքավորումները գործարկելու հմտություններ:
Մոդուլի տևողությունը	90 ժամ
Մուտքային	Մուտքային պահանջները՝ սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՄՏՃ

պահանջները	3-09-006, ՄՄՏԾ 3-09-007 մոդուլները
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատատեղը էկոլոգիապես մաքուր պահելու, մաքրելու, և կատարված աշխատանքը հանձնելու կարողություններ:
Ուսումնառության արդյունք 1	Տարբերի դարբնոցա - դրոշմիչային արտադրության սարքավորումներն ըստ նշանակության:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է ընտրում համապատասխան սարքավորում նախապատրաստվածքների կտրատման, կռման, տաք կամ սառը դրոշմում իրականացնելու համար, բ. Ճիշտ է ընտրում սարքավորման տեխնիկական բնութագիրը, ելնելով արտադրության պահանջներից:
Ուսումնառության արդյունք 2	Իմանա դարբնոցա-դրոշմիչային արտադրության տարբեր սարքավորումների վրա կատարվող աշխատանքների ընթացքում առաջացած ուժերի հաշվարկի հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է ընտրում նախապատրաստվածքների կտրատման և տաք դրոշմման համար անհրաժեշտ սարքավորման տեխնիկական բնութագիրն ըստ առաջացած ուժերի հաշվարկի, բ. Ճիշտ է ընտրում արտահատման, անցքահատման, ծռման, արտածգման, ձևավորման, մամլման համար անհրաժեշտ սարքավորման տեխնիկական բնութագիրը ըստ առաջացած ուժերի հաշվարկի:
Ուսումնառության արդյունք 3	Իմանա դարբնոցա-դրոշմիչային արտադրության տարբեր սարքավորումների կառուցվածքը և շահագործման առանձնահատկությունները:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է ներկայացնում շուռտվիկային և գիլյոտինային մկրատների, կռման և դրոշմման մուրճերի, սառը և տաք դրոշմման շուռտվիկային և հիդրավլիկական մամլիչների, հորիզոնական կռող մեքենաների կառուցվածքը, բ. Ճիշտ է ներկայացնում սարքավորումների հաղորդակների առանձնահատկությունները, կցորդիչի և արգելակի աշխատանքի էությունը և կառուցվածքային առանձնահատկությունները, բանվորական օրգանների կառուցվածքը և նրանց կարգավորումը, բանվորական գործիքների և դրոշմիչների ամրացման էլեմենտների կառուցվածքը, գ. Ճիշտ է կատարում դարբնոցա - դրոշմիչային սարքավորումների կինեմատիկական, ուժային և էներգետիկ հաշվարկների հիմնական տարրերը և կատարում սարքավորման հիմնավորված ընտրություն:
Ուսումնառության արդյունք 4	Իրականացնել դարբնոցա - դրոշմիչային տեխնոլոգիական գործընթացներ սարքավորումների վրա:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է կատարում նախապատրաստվածքի կտրատում մկրատի վրա, բ. Ճիշտ է կատարում կռում՝ պահպանելով կռման օպերացիաների հերթականությունը, գ. Ճիշտ է կատարում թերթային դրոշմման անցքահատման - արտահատման, ծռման, արտածգման, ձևավորման օպերացիաները, դ. Ճիշտ է կատարում նախապատրաստվածքի սևեռման և քայլի մեծության պահպանումը, ե. Ճիշտ է ընտրում մամլիչի միացման եղանակը (ոտնակով, մեկ սեղմակով, երկու սեղմակով, երկուսից ավելի սեղմակներով), զ. Ճիշտ է կատարում տաք ծավալային դրոշմում, պահպանելով գործընթացների հերթականությունը, է. Ճիշտ է կատարում դրոշմված կռվածքներիերի ծլեպի և միջակապի հեռացումը կողահատման մամլիչների վրա, ը. Կատարվող գործողությունների ընթացքում պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ մուրճերի և մամլիչների խնամքի հիմնական կանոնները:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է ներկայացնում մուրճերի և մամլիչների շարժական մասերի քսուքապատման հիմնական կետերը, տեղամասերն և քսուքապատման պարբերականությունը, բ. Ճիշտ է ներկայացնում մուրճերի և մամլիչների քսուքապատման համակարգի աշխատանքի սկզբունքը, քսուքի լրացման, փոխման և խնամքի կանոնները,

	գ. ճիշտ է ներկայացնում մուրճերի և մամլիչների կարգավորման կանոնները և ունի այն իրագործելու հմտություններ, դ. ճիշտ է ներկայացնում մուրճերի և մամլիչների վերանորոգման գործընթացը և այն իրակա- նացնելու անհրաժեշտության պահը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԱՐՐԵՐՈՎ ԴԱՐԲՆՈՑԱ-ԴՐՈՇՄԻՉԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՄՄՏԾ 3-09-011
Մոդուլի նպատակը	Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը ձեռք կբերի գիտելիքներ ավտոմատացված հաղորդակով գործող մամլիչների և գծերի, անընդհատ նյութի և հատային մեքենամասերի՝ դրոշմման զոնա մատուցելու և հեռացնելու մեխանիզմների կառուցվածքների վերաբերյալ և նրանց գործարկելու հմտություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՄՏԾ 3-09-006, ՄՄՏԾ 3-09-007 մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատատեղը էկոլոգիապես մաքուր պահելու, մաքրելու, և կատարված աշխատանքը հանձնելու կարողություններ:
Ուսումնառության արդյունք 1	Իմանա ավտոմատացված հաղորդակ ունեցող մամլիչների և հոսքային գծերի կառուցվածքը և նրանց վրա իրականացվող տեխնոլոգիական գործընթացները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մամլիչ-ավտոմատի աշխատանքը և նշանակությունը, բ. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական ռոտորը և դրա վրա կատարվող աշխատանքները, գ. ճիշտ է ներկայացնում տրանսպորտային ռոտորը և դրա նշանակությունը, դ. կարողանում է գործարկել մամլիչ-ավտոմատը և ռոտորային ավտոմատը:
Ուսումնառության արդյունք 2	Իմանա անընդհատ նյութի մատուցման մեխանիզմների կառուցվածքը և նշանակությունը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կեռիկով, հոլովակա-սեպային, գլանական, աքցանային, դանակային մատուցման մեխանիզմները և դրանց նշանակությունը, բ. ճիշտ է ներկայացնում մատուցման մեխանիզմների ճշտությունը, գ. ճիշտ է ներկայացնում մատուցման մեխանիզմների քայլի կարգավորման գործընթացը և ունի այն իրականացնելու հմտություն:
Ուսումնառության արդյունք 3	Իմանա հատային նախապատրաստվածքները դրոշմման զոնա մատուցելու և տեղաշարժելու մեխանիզմների կառուցվածքը և նշանակությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում պահոցային, գրեյֆերային մեխանիզմները և դրանց նշանակությունը, բ. ճիշտ է ներկայացնում հատային նախապատրաստվածքների մեխանիզմների կարգավորման գործընթացը և ունի այն իրականացնելու հմտություն:
Ուսումնառության արդյունք 4	Իմանա քանդող, ուղղող և փաթաթող սարքերի կառուցվածքը և նշանակությունը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում քանդող, ուղղող և փաթաթող սարքերի կառուցվածքները և դրանց օգտագործման նշանակությունը, բ. ճիշտ է ներկայացնում քանդող, ուղղող և փաթաթող սարքերի կարգավորման գործընթացը և ունի գործնական հմտություններ այն իրականացնելու համար, գ. ճիշտ է ներկայացնում մատուցման մեխանիզմ քանդող, ուղղող, փաթաթող սարք միասնությունը և դրանց համատեղ աշխատանքի նկարագիրը և ունի գործնական հմտություններ հավաքական այդ համակարգի աշխատանքը կարգավորելու համար:

Աղյուսակ 3

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության «Դարբին - դրոշմող» որակավորման օրինակելի ուսումնական պլան՝

N	Առարկայախմբեր, առարկաներ և մոդուլներ	Շաբաթ-ների քանակը	Ուսանողի առա-վելագույն բեռնվա ծությունը, ժամ	Պարտադիր լսարանային պարապմունք-ներ,ժամ	Ուսուցմանե ռաշխա-վորվող տարին
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ				
1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		108	72	1
2	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		27	18	1
3	Իրավունքի հիմունքներ		54	36	1
4	Պատմություն		54	36	1
5	Օտար լեզու		81	54	1
6	Ֆիզիկական կուլտուրա		102	68	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		**426**	**284**	
	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	Էկոլոգիայի հիմունքներ		54	36	1
2	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		27	18	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		**81**	**54**	
	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
1	Հաղորդակցություն		54	36	1
2	Անվտանգություն և առաջին օգնություն		54	36	1
3	Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ		81	54	1
4	Ճարտարագիտական գրաֆիկա և չափագիտություն		81	54	1
5	Համակարգչային օպերատորության հիմունքներ		81	54	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		**351**	**234**	
	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ				
1	Մասնագիտական ներածություն		27	18	1
2	Նյութագիտություն		81	54	1
3	Նախապատրաստվածքների ստացման եղանակները		81	54	1
4	Մետաղական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստվածքների պատրաստում դրոշմման եղանակով		54	36	1
5	Մաքուր աշխատատեղ: Աշխատատեղի մաքրում, գործիքների դասավորում, կատարված աշխատանքի ընդունում		27	18	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		**270**	**180**	
	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ				
1	Դարբնոցային արտադրության տեխնոլոգիական գործընթացների սկզբունքները		54	36	1
2	Դրոշմիչային արտադրության տեխնոլոգիական գործընթացների սկզբունքները		135	90	1
3	Դարբնոցային արտադրության գործիքներ և հանդերձարանքներ		54	36	1
4	Դրոշմիչային արտադրության գործիքներ և հանդերձարանքներ		135	90	1
5	Դարբնոցա-դրոշմիչային արտադրության սարքավորումների օգտագործման հմտություններ		135	90	1
6	Ավտոմատացված տարրերով դարբնոցա-դրոշմիչային արտադրության գործընթացների իրականացման հմտություններ		108	72	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		**621**	**414**	
	ԸՆՏՐՈՎԻ		**72**	**48**	1
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ		**15**	**10**	1
ԸՆԴԱՄԵՆԸ		**34**	**1836**	**1224**	
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ			**100**	**100**	
ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ					
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ		**4**			
ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ		**3**			
ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ		**2**			
	ԸՆԴԱՄԵՆԸ	**43**			